

Հոկտեմբերի 4-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

28/09/12թ. «Արարատ-2»-«Գանձասար-2» խաղին «Գանձասար-2» թիմի ֆուտբոլիստ Վրույր Գրիգորյանի հեռացման, մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 30000 դրամ:

28/09/12թ. «Արարատ-95»-«Շենգավիթ-95» խաղին «Արարատ-95» թիմի ֆուտբոլիստ Վարդան Ասատրյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

28/09/12թ. «Ֆուրման-95»-«Միկա-95» խաղին «Միկա-95» թիմի ֆուտբոլիստ Վլադիմիր Ուլուխանյանի հեռացման (բռնարարքի) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ որակազրկել 3 խաղով, «Միկա» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 դրամ:

30/09/12թ. «Իմպուլս-2-97»-«Մետալուրգ-97» խաղին «Մետալուրգ-97» թիմի ֆուտբոլիստ Սևադա Խաչատրյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Մետալուրգ» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

15Ա051 խաղին «Էջմիածին-98» թիմի կազմում չգրանցված ֆուտբոլիստ մասնակցելու համար ՀՖՖ-ի մանկապատանեկան մրցումների անցկացման կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Էջմիածնի թիվ 1 մարզադպրոցին տուգանել 3000 դրամ:

«Փյունիկ-Մրգաշատ-2002» թիմի առաջնությանը չմասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին տուգանել 5000 դրամ: